22 հոկտեմբերի 2015 թվականի N 1243 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱ-ԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 2-Ի N 351-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունվարի 18-ի N 48 որոշման 1-ին կետով հաստատված կարգի 42-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի ապրիլի 2-ի «Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին վարկային քարտային հաշիվներով շրջանառվող միջոցների և կանխիկ ձևով կատարվող ծախսերի չափաքանակները հաստատելու մասին» N 351-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1) որոշման վերնագիրը «ֆինանսների նախարարության» բառերից հետո լրացնել «, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության» բառերով.

2) որոշման 1-ին կետը «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության» բառերից հետո լրացնել «, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության» բառերով.

3) որոշման 2-րդ կետը «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին» բառերից հետո լրացնել «, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին» բառերով.

4) որոշման N 1 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր բաժնով.

«

ՀՀ առողջապահության նախարարություն						
01	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
	01	*Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ*				
		03	***Արտաքին հարաբերություններ***			
			04	***Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ***		
					Գործուղումներ և շրջագայությունների ծախսեր	10,000.0
					ԸՆԴԱՄԵՆԸ	**10,000.0**

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2015 թ. հոկտեմբերի
Երևան